«Լոֆթ ՀԿ»-ն, համագործակցելով Գյումրու համայնքապետարանի Մշակույթի և երիտասարդության հարցերով բաժնի հետ, ներկայացնում է «Վարպետը» նախագիծը, որի նպատակն է՝

մեկ գաղափարի շուրջ համախմբել գյումրեցի արվեստագետներին նույն հարթակում, այդպիսով տալ հնարավորություն ոչ միայն պատմել սեփական փորձի մասին՝ ցուցահանդեսների և ոչ ֆորմալ շփման միջոցով, այլև գյումրեցիներին ներկայացնել տաղանդավոր երիտասարդների, ովքեր ապրում և արարում են նույն քաղաքում: Հիմնախնդիրներն են

- Երիտասարդ արվեստագետների հանրայնացում
- Մշակութային միջոցառումների ապակենտրոնացում Երևանից
- Գյումրեցի արվեստագետների մոտիվացում
- Ժամանց

Գործողությունների պլան

- Ժյուրիի ընտրություն
- Նախագծի իրականացում

## Ժյուրիի ընտրություն

«Վարպետը» նախագծի ժյուրիի կազմում լինելու է 7 անձ:

Ընտրությունն իրականացվելու է Գյումրու համայնքապետարանի և «Լոֆթ ՀԿ»-ի կողմից:

Ժյուրիի անդամները ողջ նախագծի ընթացքում իրականացնելու են անկողմնապահ ընտրություն, որից կախված կընտրվեն նաև այն արվեստագետները, ում նվիրվելու են «Վարպետը» նախագծը:

Ամեն միջոցառումից առաջ ժյուրին ընտրելու է մասնակից, միջոցառումից հետո երկու օրվա ընթացքում ժյուրիին ներկայացվելու է հաշվետվություն միջոցառման արդյունքների մասին, և այդպես 7 մասնակից:

## Մեր ակնկալիքները՝

Մենք ակնկալում ենք հովանավորչություն Գյումրու քաղաքապետարանից, որի շնորհիվ «Լոֆթ ՀԿ»-ի գործընկեր «Լոֆթ Գյումրի»-ի տարածքում հնարավոր կլինի անցկացնել 7 մեծ միջոցառում: Բոլոր միջոցառումների ընթացքում մասնակիցներն ու հյուրերը հնարավորություն կունենան անվճար ծանոթանալ քաղաքի տաղանդավոր վարպետների հետ:

Ներկայացված բյուջեում կտեսնեք «Լոֆթ ՀԿ»-ի կողմից արված ներդրումը՝ տարածքի ամրագրման համար, ակնկալվող սիմվոլիկ գումարը նախատեսվում է օգտագործել միջոցառումները պատշաճ մակարդակի անցկացնելու և տեսանելիությունը ապահովելու համար:

*Իրականացման ամսաթվերը ենթակա են փոփոխության

| 0.00 | Անվանում | Չափման միավոր | Միավորի քանակ | Արժեք | Ընդհանուր | Ներդրում \| Լոֆթ | Ակնկալվող գումար |
|---|---|---|---|---|---|---|---|
| Ա | Բաններ | հատ | 1.00 | 30,000.00 | 30,000.00 | 0.00 | 30,000.00 |
| Բ | Թռուցիկ | հատ | 400.00 | 140.00 | 56,000.00 | 0.00 | 56,000.00 |
| Գ | Բեյջեր | հատ | 5.00 | 600.00 | 3,000.00 | 0.00 | 3,000.00 |
| Դ | Հյուրասիրություն | Ծառայություն | 7.00 | 30,000.00 | 210,000.00 | 0.00 | 210,000.00 |
| Ե | Վիդեո/ Լուսանկար | Ծառայություն | 1.00 | 150,000.00 | 150,000.00 | 0.00 | 150,000.00 |
| Զ | Անցկացման վայր | Ծառայություն | 7.00 | 220,000.00 | 1,540,000.00 | 1,380,000.00 | 160,000.00 |
| Է | Նվերներ վարպետներին/պատվոգրեր | հատ | 7.00 | 6,000.00 | 42,000.00 | 0.00 | 42,000.00 |
| Ը | Հրավիրատոմս | հատ | 100.00 | 500.00 | 50,000.00 | 0.00 | 50,000.00 |
| ԸՆԴՀԱՆՈՒՐ: | | | | | **2,081,000.00** | **1,380,000.00** | **701,000.00** |

Գյումրու համայնքապետ
Վարդգես Սամսոնյանին

Հարգելի պրն. Վ. Սամսոնյան,

«Լոֆթ ՀԿ»-ն, համագործակցելով Գյումրու համայնքապետարանի Մշակույթի և երիտասարդության հարցերով բաժնի հետ , ներկայացնում է «Վարպետը» մշակութային նախագիծը, որի նպատակն է, մեկ գաղափարի շուրջ համախմբել գյումրեցի արվեստագետներին նույն հարթակում, այդպիսով տալ հնարավորություն ոչ միայն պատմել սեփական փորձի մասին՝ ցուցահանդեսների և ոչ փորմալ շփման միջոցով, այլև գյումրեցիներին ներկայացնել տաղանդավոր երիտասարդների, ովքեր ապրում և արարում են նույն քաղաքում:

Մենք կարևորում ենք նախագծի մասնակցության հասանելիությունը հանրության լայն շերտերին, այդ իսկ պատճառով Ձեզ ենք դիմում աջակցել վերջինիս իրականացմանը, ապահովելով ազատ մուտք ցանկացած արվեստասերի համար:

Մեր ակնկալիքները՝

Գյումրու քաղաքապետարանից ակնկալում ենք հովանավորչություն, որի շնորհիվ «Լոֆթ ՀԿ»-ի գործընկեր «Լոֆթ Գյումրի»-ի տարածքում հնարավոր կլինի անցկացնել 7 մեծ միջոցառում:

Բոլոր միջոցառումների ընթացքում մասնակիցները ու հյուրերը հնարավորություն կունենան անվճար ծանոթանալ քաղաքի տաղանդավոր վարպետների հետ:

Ներկայացված բյուջեում կտեսնեք «Լոֆթ ՀԿ»-ի ֆինանսական ներդրումը՝ գաղափարի իրագործման համար, ակնկալվող սիմվոլիկ գումարը նախատեսվում է օգտագործել միջոցառումներն ավելի պատշաճ կերպով իրականացնելու և առավել լայն շերտերի հասանելի դարձնելու նպատակով:

Նախագիծն ու բյուջեն կարող եք տեսնել կից:

Հարգանքով՝
«Լոֆթ ՀԿ»-ի տնօրեն՝ Արևիկ Համբարձումյան
Ծրագրի ղեկավար՝ Ամալյա Թումասյան

Ամսաթիվ՝ 11.02.2022
Ստորագրություն՝

"LOFT" EDUCATIONAL, CULTURAL AND YOUTH DEVELOPMENT NON-GOVERNMENTAL ORGANIZATION
02818929

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ»
Քարտուղարության բաժին
ՍՏԱՑՎԱԾ Է 11 02 2022
2503